Հայտերի ներկայացման հրավեր

Հայաստանի Հանրապետություն

12 նոյեմբերի 2016 թ.

Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր

Վարկ No 3284-ARM (ԱԶԲ)

Պայմանագիր № A-07LR

Լոռու մարզի Վանաձոր քաղաքի թիվ 7 հիմնական դպրոցի կառուցում

1. Հայաստանի Հանրապետությունը Ասիական զարգացման բանկից (ԱԶԲ) ստացել է ֆինանսավորում Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի համար և մտադիր է միջոցների մի մասն օգտագործել **«Լոռու մարզի Վանաձոր քաղաքի թիվ 7 հիմնական դպրոցի կառուցման»** պայմանագրի շրջանակներում վճարումներ կատարելու համար:

2. Սույնով **Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏԶՀ)** հրավիրում է ներկայացնել կնքված փաթեթներ իրավասու մասնակիցներից՝ **Լոռու մարզի Վանաձոր քաղաքի թիվ 7 հիմնական դպրոցի կառուցման համար**: Որակավորման պահանջները ներառում են. ա/ վերջին հինգ տարիներից որևէ մեկ տարում հաջողությամբ կատարված **780.000.000** ՀՀ դրամի շին. աշխատանքների ծավալ, բ/ վերջին հինգը տարվա ընթացքում որպես գլխավոր կապալառու կատարած առնվազն երկու պայմանագրեր՝ քաղաքացիական շենքերի կառուցման և/կամ վերակառուցման: Ներկայացվող աշխատանքներից յուրաքանչյուրի արժեքը չպետք է պակաս լինի **416,000,000** ՀՀ դրամից, կամ մեկ պայմանագիր առնվազն **832,000,000** ՀՀ դրամից, գ/ նվազագույնը **87.000.000 ՀՀ** դրամի իրացվելի միջոցներ և/կամ վարկային գիծ, դ/ որպես պայմանագրի շնորհման նախապայման, հայտատուն պետք է ներկայացնի ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից հաստատված «**Քաղաքացիական**», «**Էներգետիկ**» և «**Հիդրոտեխնիկական**» լիցենզիաներ:

3. Մրցույթն իրականացվելու է Ազգային մրցակցային մրցույթի միջոցով, համաձայն Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ «*Ապրանքների, աշխատանքների և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ՄԶՎԲ փոխառությունների և Համաշխարհային բանկի վարկերի ու դրամաշնորհների փոխառուների կողմից*» հունվար 2011 թ. վերանայված հուլիս 2014 թ. «Գնումների ուղեցույցներ»: Բացի այդ, խնդրում ենք ծանոթանալ նաև ԱԶԲ Գնումների ուղեցույցի ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի գնումների գործընթացներում իրավասու հայտատուների ԱԶԲ-ի անդամ-երկրների ցանկին (ԱԶԲ-ի անդամ-երկրների ցանկը կարելի է ներբերնել հետևյալ հղումով՝ http://www.adb.org/countries/main) և ԱԶԲ-ի Գնումների ուղեցույցի «Իրավասություն» և «Խարդախություն և կաշառակերություն» կետերում շարադրված պահանջներին (ԱԶԲ-ի

Գնումների ուղեցույցը կարելի է ներբերնել հետևյալ հղումով՝ https://www.adb.org/documents/procurement-guidelines):

4. Հետաքրքրված իրավասու մասնակիցները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամից և ուսումնասիրել Մրցութային փաստաթղթերը աշխատանքային ժամերին 10:00–17:00 հետևյալ հասցեով՝ ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31, 405 սենյակ, 4-րդ հարկ:

5. Շահագրգիռ իրավասու մասնակիցները Մրցութային փաստաթղթերն ամբողջությամբ հայերեն լեզվով կարող են ստանալ վերոնշյալ հասցեով՝ վճարելով 3000 ՀՀ դրամ չվերադարձվող գումար: Վճարումն իրականացվում է բանկային փոխանցումով: Փաստաթղթերը տեղադրված են նաև www.gnumner.am և www.atdf.am կայքէջերում:

6. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով ոչ ուշ քան **2016 թ. դեկտեմբերի 12-ը ժամը 12:00**: Առաջարկները ***չեն կարող*** ներկայացվել էլեկտրոնային եղանակով: Ուշացված առաջարկները կմերժվեն: Մրցութային առաջարկները հրապարակայնորեն կբացվեն մրցույթի մասնակիցների նշանակված ներկայացուցիչների, ինչպես նաև բացմանը ներկա գտնվելու բոլոր ցանկացողների ներկայությամբ ստորև նշված հասցեով:

7. Բոլոր առաջարկները պետք է ուղեկցվեն մրցույթի ապահովման հայտարարագրով:

8. Վերոնշյալ հասցեն է՝

Ում. Արթուր Սողոմոնյան

Գնումների վարչության պետ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ,

ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31, սենյակ 406

Հեռ. +374 60 501 560